ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 17 » օգոստոսի 2023 թվականի N: 331 - Ա ք.Գյումրի

ԱՐԹՈՒՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 685-Ա որոշումը, հիմք ընդունելով Արթուր Ղազարյանի 2023 թվականի օգոստոսի 14-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Գր. Լուսավորչի անվան N 31 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արթուր Ղազարյանին տրամադրել 30 աշխատանքային օր՝ 2022 թվականի տեղափոխված ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2023 թվականի օգոստոսի 21-ից մինչև հոկտեմբերի 2-ը ներառյալ:

2. Արթուր Ղազարյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Գր. Լուսավորչի անվան N 31 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

նշանակել նույն կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Քնարիկ Մխիթարյանին:

Ա.ՄԱՐՏԻԿՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է՝